

**ՀԱՎԱՏԻ ԵՎ ՄՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱԾՆԵՐԻ
ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԴՈՆ ԿԻՏՈՏՈՒՄ»**

Այա Խաչատրյան

Բազմիցս կարևորվել է այն հանգամանքը, որ թարգմանիչը, առանց տվյալ լեզվի և մշակույթի մասին խոր իմացության, չի կարող կատարել հաջող թարգմանություն: Երբ խոսքը վերաբերում է համաշխարհային գրականության գոհարներից մեկին՝ «Դոն Կիխոտին»՝ առավել ևս: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սերվանտեսը «Դոն Կիխոտում» օգտագործել է չորս հարյուրից ավելի առած և ասացվածք, հարյուրից ավելի թեմաթիվ խոսք, և, ընդհանուր առմամբ դարձվածային միավորների թիվը ստեղծագործության մեջ գերազանցում է հինգ հարյուրը¹: Առած - ասացվածքների և դարձվածքների նման առատությունն անպայմանորեն հեղինակի կողմից որոշակի նպատակ է հետապնդում, իսկ դա նշանակում է, որ թարգմանիչը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի դրանց, փորձի զուգադրահամեմատական քննություն կատարել երկու լեզուներում՝ ստեղծագործության մեջ գոյություն ունեցող առածների և ասացվածքների համարժեքությունն ապահովելու և ապա նոր վստահաբար ընթերցողի դատին հանձնելու:

Այս առիթով առանձնակի ուսումնասիրության են արժանի հավատի և սնահավատության տարրեր պարունակող առածներն ու ասացվածքները: Այդ բնույթի առած-ասացվածքներից կարող ենք կարծիք կազմել տվյալ ժողովրդի կրոնի, եկեղեցական տոների, ծիսակատարությունների, ընդհանրապես կրոնական մշակույթի վերաբերյալ: Մնահավատությանն ու նախապաշարմունքներին առնչվող առածները և ասացվածքները համեմատաբար առավել ընդհանուր են, սակայն, ինչ խոսք, դրանց թվում կան նաև այնպիսիները, որոնք գրեթե անհնար է լինում ընկալել՝ պայմանավորված միմիայն տվյալ ժողովրդին հատուկ պատկերավոր մտածողության դրսևորումներով: Թարգմանիչը, առանց ծանոթ լինելու

¹ H.O. Bizzarri, Diccionario de Paremiias Cervantinas, universidad de Alcalá, Alcalá de Henares, España, 2015.

տվյալ ժողովրդի հոգևոր, կրոնական, ծիսական առանձնահատկություններին, չի կարող ընկալել, առավել ևս համարժեք կերպով փոխանցել դրանք մեկ այլ լեզվով: Հիմնականում նման առած-ասացվածքներում որպես բաղադրիչ գործածված են **Աստված, սատանա, քահանա, մեղք, քավություն, դև, աբեղա, վանահայր, սուրբ** և նման բառերը: Սնահավատության դեպքում առկա են այնպիսի բաղադրիչներ, որոնք երբեմն կարող են ընկալելի լինել ընդամենը մեկ ժողովրդի: Եթե սնահավատ հայ մարդը նախընտրում է ոչ մի գործ չձեռնարկել ամսի *դասներեքին*, թերևս կարելի է բացատրել ռուսերենում հայտնի *пятница 13-го* դարձվածից¹, որն էլ իր հերթին փոխառված է հունարենից²: Սակայն միևնույն տասներեք թիվը իսպանացի սնահավատ մարդը կապում է ոչ թե ուրբաթ, այլ երեքշաբթի օրվա հետ: Իսպանացիներին քաջ հայտնի է՝ *el trece y el martes ni te cases ni te embarques*, (բառացի՝ *երեքշաբթի՝ դասներեքին ո՛չ ամուսնացիր, ո՛չ էլ նավարկիր*) առածը³: Իսպաներենում *երեքշաբթի martes* անվանումը ծագում է լատինական դիցաբանության մեջ հայտնի Մարտե՝ պատերազմի աստծու անունից, որից և Մարս մոլորակի, ըստ այդմ այն համարվում է անհաջող օր որևէ բան ձեռնարկելու համար: Առածի երկրորդ մասը՝ *մի՛ նավարկիր*, ևս պատահական չէ իսպանացի սնահավատ մարդու համար, քանի որ նավաստիները հայտնի են եղել իրենց առավել սնահավատ դրսևորումներով: Ահա միևնույն կերպ հայ սնահավատ մարդն ասում է՝ *մայիս-վայիս*, և ամբողջ մայիս ամսվա ընթացքում չեն ամուսնանում, սակայն իսպանացի ժողովրդի առածանին լի է *մայիս* բաղադրիչով առածներով, որտեղ կան թե՛ դրական և թե՛ բացասական հարանշանակություններով առածներ: Իսպանացին ասում է՝ *agua de mayo, pan para todo el año*, (բառացի՝ *մայիսին*

¹ Ռուսերենում՝ *пятница, 13-е число* արտահայտությունը ժամանակի ընթացքում ձեռք է բերում դարձվածային արժեք՝ փոխարենը կիրառության մեջ մտնելով *пятница 13-го* տարբերակով:

² Տե՛ս <https://bit.ly/2J7OQJF>, որտեղ տրամադրվում է մանրամասն տեղեկություն *ուրբաթ դասներեքի* ծագման, ինչպես նաև տարածման մասին: Աղբյուրում հիշատակվում է, որ տերմինը առաջարկվել է Դոնալդ Դոսսեյի կողմից՝ բնութագրելու անհետք վախերի դրսևորումները, հատկապես վախը տասներեք թվի հանդեպ: Այն նույնիսկ ունի տրիսկալյեկաֆոբիա անվանումը: Մինչ այդ տասներեք թիվը և ուրբաթ օրը առանձին համարվել են անհաջող տարրեր:

³ Տե՛ս, www.cvc.cervantes.es, Refranero multilingüe, Centro virtual Cervantes.

ջուր, ամբողջ տարին հաց) և *días de mayo, días del diablo: no amanece cuando ya oscurece*, (բառացի՝ մայիսյան օրեր՝ սատանայի օրեր, լույսը չբացված, արդեն մթնած) կամ *en buena hora vengáis, mayo, el mejor mes de todo el año*, (բառացի՝ բարի գալուստ, մայիս, տարվա լավագույն ամիս), հետևաբար այն չի կարող ընկալվել զուտ բացասական կողմից: Որոշ դեպքերում էլ սնահավատություն ցույց տվող առաձններում անհնար է լինում առանձնացնել որևէ բաղադրիչ: Նման առաձներն ու ասացվածքները հնարավոր է լինում ընկալել ամբողջական համատեքստում: Եթե հավատի դրսևորում արտահայտող առաձներում և ասացվածքներում մենք հաճախ հանդիպում ենք հուշող բաղադրիչների, ապա սնահավատության դեպքում խնդիրը էլ ավելի է բարդանում, քանի որ այն բաղադրիչը, որը տվյալ առաձում ապահովում է սնահավատության գաղափարը, մեկ այլ առաձում ամենևին էլ նման բովանդակություն չի ունենում:

Ունենալով միևնույն կրոնը, այսինքն՝ դավանելով քրիստոնեություն, հայ-իսպանական կրոնական ըմբռնումները, կարելի է ասել, մեծամասամբ համընկնում են, հետևաբար թարգմանելիս դրանք չպետք է առանձնակի խնդիր իրենցից ներկայացնեն: Մեկ այլ խնդիր է գտնել դրանց համարժեք տարբերակները թարգմանող լեզվում: Այսպես՝ Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ում երկու անգամ հանդիպում ենք հետևյալ առաձը՝ *A Dios rogando y con el mazo dando*, (բառացի՝ **Աստծուն խնդրելով, մուրճով խփելով**):

Առաձը կիրառվում է ցույց տալու համար, թե որքան կարևոր է ապավինել Աստծուն, սակայն, միևնույն ժամանակ ջանքեր գործադրել հաջողության հասնելու համար: «Դոն Կիխոտի» հայերեն թարգմանություններում՝ ունենք հետևյալ տարբերակները՝

ա) ...և «աստծուց խնդրիր, մուրճով էլ խփիր»... (ԱՂՄԹ, II, LXXI, 520)

բ) ... աստծուց խնդրիր, բայց ձեռքերդ էլ շարժիր... (ՎՍԲԹ, II, LXXI, 492)

¹ Մեր ուսումնասիրության համար հիմք են ծառայել հայերեն Ա. Ղազարյանի՝ ռուսերենից միջնորդավորված և Վ. Սարգսյանի բնագրից կատարված թարգմանությունները: Տե՛ս 1. Սերվանտես Միգել դե, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Ա. Ղազարյանի, (ԱՂՄԹ) հ. 1, 2, Եր., 1950, 2. Սերվանտես Միգել դե, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Վ. Սարգսյանի, (ՎՍԲԹ) հ. 1, 2, Ասողիկ հրտ., Եր., 2010:

Ինչպես տեսնում ենք, միջնորդավորված թարգմանության մեջ նկատում ենք պատկերային համակարգի որոշակի նմանություն, իսկ բնագրից կատարված թարգմանության մեջ թարգմանիչը առաժը ձևափոխել է՝ փորձելով պատկերը փոխարինել իմաստի դյուրին ընկալումը ապահովող պատկերով: Միջնորդավորված թարգմանության դեպքում «*ինքդ էլ մուրճով հարվածիր*» կամ «*մուրճդ էլ խփիր*», տարբերակները որոշակի շփոթ կարող են առաջացնել ընթերցողի մոտ: Չէ՞ որ ընթերցողը այն կարող է զուգակցել «*ասելիքը պնդել, վերջնական որոշում ընդունել*» իմաստների հետ: Իսպաներենում *mazo* մուրճ բառը կիրառելի է հենց որպես **դատավորի մուրճ**, սովորական մուրճը, որպես աշխատանքային գործիք, կոչվում է *martillo*:

Երկու թարգմանություններում էլ թարգմանիչները հետամուտ են եղել այն հանգամանքին, որ առաժները և ասացվածքները հանգավորման շնորհիվ նկատելի լինեն: Այն կարևոր հանգամանք է. եթե նրանք ունեն իրենց համարժեքը թարգմանող լեզվում, նման խնդիր չի առաջանում, սակայն, երբ տվյալ լեզուն չունի նման առաժ կամ ասացվածք, դրանք միաձուլվում են տեքստին, որից տուժում է հեղինակի կողմից կիրառված հնարը: Չմոռանանք այն հանգամանքը, որ շատ առաժներ փոխանցվել են մի ժողովրդից մյուսին նաև հաջող թարգմանությունների շնորհիվ: Նշենք, որ վերը նշված առաժին համապատասխան՝ հայերենում ունենք հետևյալ համարժեք առաժները՝ *Աստուց խնդրի՛ր, սակայն բահը ձեռքդ պահի՛ր*, «*Աստված ողորմած է՞*» *ասողը անոթի կմնա, Դու քե՛զ օգնիր, Աստված էլ քեզ կօգնի*:

Իսպաներենում նույն իմաստով առկա է մի ամբողջ հոմանիշային շարք.

A Dios rogando y al macho dando, Rezando, rezando, y con el mazo dando, Ayúdate y te ayudaré, A quien madruga, Dios le ayuda, ¡Guay de la labor do primero se ve el sol que el señor! , Más ayuda la mañana que prima ni hermana, Pide a Dios y a los santos, pero echa abono en tus campos, Quien madruga, halla el pájaro en el nido, y quien se duerma, hállalo vacío, Si quieres tener buena fama, que no te halle el sol en la cama, Reza, pero sigue remando (hacia la orilla):

Ինչպես նկատում ենք այս առաժների բազմազանության մեջ *Աստուց խնդրի՛ր, սակայն բահը ձեռքդ պահի՛ր* առաժը առավել ընդհանրություն ունի իսպաներեն *Աստուց խնդրի՛ր, մուրճդ էլ խփիր* առաժին, որտեղ

տարբերությունը *բահի* և *մուրճի* մեջ է. բահը աշխատանքային գործիք է, մուրճը՝ դատավորի: Կարելի է նկատել, որ թարգմանության այս ոճային հնարը համապատասխանում է առածների և ասացվածքների թարգմանության՝ վերոհիշյալ հնարների դասակարգման *ցուցիչային* հնարին:

Քանի որ առածների և ասացվածքների ավելի լայն կիրառության դաշտը բանավոր խոսքն է, ապա, ինչպես արդեն նշել ենք, այն պետք է ունենա որոշակի հանգավորում: Այն դեպքերում, երբ հանգավորումը բացակայում է, թարգմանիչը առավել շեշտադրում է իմաստային համարժեքությունը: Այժմ քննենք հավատի իմաստային դաշտի մի այլ ասացվածք, որը հեղինակը կիրառել է երկու անգամ՝ **Con lo mío me ayude Dios - Ինձ էլ Աստված օգնի :**

Ayude Dios con lo suyo a cada uno, señor maese Pedro, y caminemos todos con pie llano y con intención sana. (II, XXVI, 854)

... que llegan tarde o mal o nunca; **con lo mío me ayude Dios.** (II, VII, 681)

Հեղինակը ասացվածքը մի դեպքում կիրառել է իր ամբողջական տարբերակով, մյուս դեպքում ձևափոխել այն՝ նրբորեն միաձուլելով այն տեքստին: Թե՛ միջնորդավորված և թե՛ բնագրից կատարված թարգմանություններում առաջին դեպքում ունենք համարժեք թարգմանություն՝ **Աստված ամեն մեկին իր սրտի ուզածն է տալիս:** (ԱՂՄԹ, II, XXVI, 208), (ՎՍԲԹ, II, XXVI, 193)

Թարգմանիչներն այս դեպքում այն փոխարինել են ասացվածքի հոմանիշ տարբերակով՝ ասացվածքային համաբանությամբ, միևնույն ժամանակ պահպանելով ցուցիչը՝ այն է՝ **Աստված** բաղադրիչը: Երկրորդ դեպքում թարգմանիչները դիմել են սովորական պատճենման հնարին՝ **աստվածն էլ կօգնի:** (ԱՂՄԹ, II, VII, 62, ՎՍԲԹ, II, VII, 52)

Քննարկենք մեկ ուրիշ օրինակ, որտեղ կարևորվում է մարդու հաջողակ լինելը՝ A quien Dios quiere bien, la casa le sabe, բառացի՝ ում աստված սիրում է, նրա տան տեղը իմանում է:

No, sino popen y calóñenme, que vendrán por lana y volverán trasquilados, y **a quien Dios quiere bien, la casa le sabe...**(II, XLIII, 977)

Հայերեն թարգմանություններում ունենք հետևյալ տարբերակները՝

Թող մի փորձեն փոշտալ ինձ վրա. «Բրդի կգան-խուզված կերթան», իսկ **«Աստված իր սիրածին մառանի տակն էլ կգտնի»** (ԱՂՄԹ, II, XLIII, 318)

Թող բախտները փորձեն և իմ հետևից ինչ-որ բան ասեն. կգան խուզելու, խուզված ետ կգան, **աստված իր սիրեցյալի փան փեղը լավ գիտի** (ՎՍԲԹ, II, XLIII, 298):

Միջնորդավորված թարգմանության դեպքում կատարվել է հրաշալի ընտրություն՝ կիրառելով ասացվածքային համաբանության հնարը: Թարգմանիչը ասացվածքը փոխարինել է իմաստային-ոճական առումով համարժեք ասացվածքով՝ միաժամանակ պահպանելով *Աստված* գերակա բաղադրիչը: Բնագրից կատարված թարգմանության դեպքում թարգմանիչը նախապատվություն է տվել դիպվածային կիսապատճենմանը, մինչդեռ որպես ասացվածքային համաբանություն հայերենում կան նաև հետևյալ առածները՝ *Աստծու պահած գառը գելը չի ուտի: Քոռ հավքի բունը Աստված կը շինե:*

Անշուշտ, առածների տվյալ համարժեքները ներկայացնելիս կարևոր է այն, որ թե՛ իսպաներենում և թե՛ հայերենում առածի հիմնական ցուցիչը մնա **Աստված** բառը: Առաջին հերթին այն թարգմանության մեջ ընթերցողին չի հեռացնի բնագրից, որտեղ, անպայմանորեն հեղինակի ընտրությունն էլ պատահական չի եղել:

Իսպաներենում առածին հոմանիշ կարող են համարվել հետևյալ առածները՝ որոնցում ևս գերակա բառը **Աստվածն է՝** A quien Dios bien quiere, la hormiga a buscarle viene , A quien Dios quiere bien la casa lo sabe, é á quien mal la casa é fogar , A quien Dios quiere bien, en Sevilla le dio de comer , A quien Dios quiere bien, dale de comer en los campos de Santarén, y a quien quiso más que bien, se lo dio en los campos de Vaivén և այլն:

Աստծո գթասրտության մասին ասացվածքը՝ Cuando Dios amanece, para todos amanece, (II, XLIX, 1024) բառացի՝ երբ Աստված հայտնվում է, բոլորի համար է հայտնվում, թարգմանվել է՝

...որովհետև աստծու առաքած առավոտը բոլորիս վրա է բացվում (ԱՂՄԹ, II, XLIX, 360):

...քանզի աստծո փված լույսը, բոլորիս համար է բացվում (ՎՍԲԹ, II, XLIX, 339)

Հայերենում նման խրատ ամփոփող ասացվածքներ կարող են համարվել *Աստված որ փա, գիժ ու խելոք չի հարցնի, աստված որ փա աջ ու ձախին մտիկ չի փա* տարբերակները:

«Դոն Կիխոտում» հաճախակի են այն երկխոսությունները, որտեղ հերոսները պարբերաբար անդրադառնում են առածների և ասացվածք-

ների կարևորությանը, և, որ, ամենահատկանշականն է, կարևորում են դրանց ճիշտ և տեղին կիրառելը: Այսպես՝

-Վկա է մեր տեր աստված,- ասաց Սանչոն, որ ձերդ ողորմածությունը անտեղի է բարկանում... Հենց այս պահին մի չորս առած ուզում են դուրս պրծնել, բոլորն էլ շատ տեղին են ու պատեհ, բայց չեմ ասի, քանի որ **բոլոր լռակյացներին սուրբ են անվանում:**

-Այդ սուրբը հաստատ դու չես,- ասաց Դոն Կիխոտը, քանզի դու ոչ միայն բարի լռակյաց չես, այլ չար շատախոս ես և ավելի չար հաստագլուխ: (ՎՍԲԹ, II, XLIII, 298)

Այսպիսով, եթե Դոն Կիխոտը կարևորում է դրանց տեղին և պատեհ կիրառությունը, Սանչոյի համար միայն դրանց կիրառությունը բավական է, որպեսզի հաստատի իր միտքը: «Դոն Կիխոտի» հատկապես երկրորդ հատորում Սանչոն ավելի հաճախ է կիրառում առածներ ու ասացվածքներ, և դրանց առատությունը Սանչոյի կերպարի ամբողջական ստեղծման անքակտելի մասն է կազմում:

Սերվանտեսը առածների և ասացվածքների կիրառությանը նախապատվություն տալուց բացի, հմտորեն վերափոխում է դրանք, երբեմն նոր շունչ հաղորդում: Իսպաներենում հայտնի՝ ***Al buen llamar llaman santo- լավ լռողին սուրբ են անվանում*** առածը ժամանակի ընթացքում որոշ պատմական իրողությունների հիման վրա՝ նոր շունչ է ստանում, և լայն տարածվում է նրա մյուս տարբերակը՝ ***Al buen llamar llaman Sancho- լավ լռողին Սանչո են անվանում***²: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ իսպանացիների մեծ մասին հայտնի է առածի սերվանտեսյան տարբերակը: Հեղինակը, առածը կիրառելով, ամբողջովին հակադրվել էր նրա նախնական իմաստին, այսինքն՝ գերիշխում է առածի

¹ Տե՛ս **Muñoz S., Zurdo Ruiz M., et alli, Refranero Multilingüe**, Այս աղբյուրում բերվում է Կոռեսաի և Սբարբիի մեկնաբանությունները տվյալ առածի վերաբերյալ, որտեղ ըստ Կոռեսաի առածում Սանչո-ն ընկալվում է համարժեք սուրբ (santo), առողջ (sano) և բարի (bueno) բառերին: Ըստ Սբարբիի՝ առածում կիրառված Սանչո անձնանունը վերաբերում է Սանչո Երկրորդ թագավորին:

² Տե՛ս **Bizzari H., Diccionario de Paremias Cervantinas**, Universidad de Alcalá, Alcalá de Henares 2015. Página web: www.uah.es Այստեղ առածի ծագման մասին նշվում է, որ ըստ որոշ աղբյուրների այն հենց Դոն Կիխոտի զինակիր Սանչոյի մասին է, չնայած հնարավոր է, որ այն Սանչո Երկրորդ թագավորի մասին լինի, որին գրեթե սուրբ են համարել:

հեգնական իմաստը, չէ՞ որ «իր Սանչոն» երբեք չէր կարողանում լռել:

Pero no los diré, porque **al buen callar llaman Sancho**. (XLIII, II, 977)

Միջնորդավորված թարգմանության մեջ թարգմանիչը կատարել է դիպվածային պատճենում. Բայց ես այդ առաձները չեմ ասի, որովհետև «**Սանչո է նա - ով կյանքում լռակյաց է**»: (ԱՂՄԹ, XLIII, II, 319)

Մինչդեռ բնագրից կատարված թարգմանության դեպքում կարդում ենք՝...բայց չեմ ասի, քանզի **բարի լռակյացներին սուրբ են ասում**: (ՎՍԲԹ, XLIII, II, 298)

Այս դեպքում թարգմանիչը կիրառել է առաձի նախնական տարբերակը, սակայն, արդեն ընթերցողը չի կարող գնահատել հեղինակի կողմից կիրառված այդքան հմուտ հնարը, այն է՝ իր հերոսին տիպականացնող կերպարի նկարագրությունը: Չէ՞ որ երբեմն նման փոփոխություններով է դրսևորվում Սերվանտեսի ոճի, արտահայտվելու յուրատեսակ դրսևորման մի ամբողջ շարան:

Սերվանտեսի ստեղծագործություններում կիրառված առաձներից շատերը ունեն իրենց նախապատմությունը: Դրանցից շատերը հասկանալու համար, անգամ եթե ընթերցողի առջև ամենահաջող կատարված թարգմանությունն է, նրանից հաճախ պահանջվում է որոշակի իմացություն այս կամ այն բնագավառի վերաբերյալ:

Հեղինակը գլուխներից մեկում հրաշալիորեն ներկայացնում է Աստծո գործությունն ու ամենակարող լինելը՝ միաժամանակ միաձուլելով իր խոսքը հայտնի առաձներին և ասացվածքներին: Այսպես՝ *Աստված, որ հոգ է փանում բոլորի մասին, մեզ աչքաթող չի անի, մանավանդ որ մենք զբաղված ենք այդքան աստվածահաճո գործերով: Աստված տիրություն է անում մոծակներին օդում, որդերին հողում, գորտերին ջրում և այնքան բարեգութ է, որ արևը լույս է փալիս և բարիներին և չարերին, իսկ անձրևը ջուր է փալիս և անմեղներին, և մեղավորներին*: (ՎՍԲԹ, I, XVIII, 146)

«Դոն Կիխոտում» կան մեջբերումներ բազում ստեղծագործություններից. կան առաձներ, որոնք հենց լատիներեն լեզվով են: Հաճախ այդ առաձներն ու ասացվածքները հենց Աստվածաշնչից են¹, ինչպես օրինակ

¹ *A quien se humilla, Dios le ensalza* աստվածաշնչյան առաձը նախապատմությունը հետևյալն է, երբ փարիսեցիները Հիսուսին հրավիրում են ընթրիքի, նա նկատում է, թե ինչպես են հրավիրյալներից շատերը փորձում նստել սեղանի գլխավոր հատվածում, այսինքն, փորձում պատվավոր տեղ զբաղեցնել: Բնականաբար, քանի որ տեղերը

հետևյալ գլխում՝

-Con todo eso, te has de sentar, porque **a quien se humilla, Dios le ensalza.** (I, XI, 120)

Չնայած դրան, դու դարձյալ նստիր, որովհետև **ով որ խոնարհեցնում է իրեն, Աստված բարձրացնում է** (ԱՂՄԹ, I, XI, 83):

Այնուամենայնիվ, դու պետք է նստես,- ասաց դոն Կիխոտը,- **քանզի ով խոնարհվում է, աստված նրան բարձրացնում է** (ՎՍԲԹ, I, XI, 90):

Ահա Աստծո ուժը, զորությունը և բարեհաճությունը խորհրդանշող առաջնների և ասացվածքների կողքին շատ են նաև այնպիսիները, որոնք ի ցույց են դնում նրա հանդեպ տածվող վախը, ինչպես օրինակ՝ **Dios sufre a los malos, pero no para siempre** առաձը, (բառացի՝ *Աստված հանդուրժում է չարագործներին, բայց ոչ ընդմիշտ*): Այս առաձը ևս կիրառվել է «Դոն Կիխոտում՝ *Ya viniese Clavileño y ya me viese con Malambruno!, que yo sé que no habría navaja que con más facilidad rapase a vuestras mercedes como mi espada reparía de los hombros la cabeza de Malambruno; que Dios sufre a los malos, pero no para siempre.* (II, XL, 955)

Հայերեն երկու թարգմանություններում էլ առաձը բառացիորեն նույնն է՝ **Աստված հանդուրժում է չարագործներին, բայց ոչ դարեր շարունակ**: (ԱՂՄԹ, II, XL, 297):

Առաձների և ասացվածքների թարգմանության ժամանակ բացի համարժեք իմաստ հաղորդելը անհրաժեշտ է նախ փնտրել այնպիսի համարժեք, որտեղ ցուցիչը նույնն է երկու լեզուներում էլ: Սակայն այն դեպքում, երբ տվյալ առաձը կամ ասացվածքը չունի համարժեք մեկ այլ լեզվում, ավելի լավ է փոխարինել այն մեկ այլ հոմանիշ տարբերակով, քանի որ միշտ չէ, որ բառացի թարգմանված առաձը կամ ասացվածքը կարող է համարժեք ձևով ընկալվել թիրախ մշակույթում: Եվ, քանի որ **Աստված բաղադրիչով հայերենում չունենք համարժեքներ, կարծում ենք, որ կարելի է փոխարինել այն՝ Դատաստան կա գալու, պատասխան կա տալու** ասացվածքով:

Հետևյալ ասացվածքում ցուցիչ է հանդիսանում **դատաստան** բառը,

սահմանափակ են լինում, նրանց մեջ վիճաբանություն է սկսվում: Տեսնելով այդ ամենը՝ Հիսուսը իր աշակերտներին թույլ չի տալիս զբաղեցնել գլխավոր տեղերը, ընդհակառակը, նրանց հորդորում է նստել ամենահեռվում՝ հորդորելով, որ նա ով փորձում է փառաբանվել նվաստացած կլինի, իսկ ով իրեն խոնարհեցնում է, կլինի փառաբանված:

սակայն քանի որ դատաստանը հենց նույն Աստծո առաջ պատասխան տալու երևույթն է, այն շատ համահունչ կարող էր ձուլվել բնագրային տեքստին: Ասացվածքային կամ առածային համաբանությամբ փոխարինված տարբերակները թարգմանության մեջ ապահովում են համարժեքության բարձր մակարդակ՝ միևնույն ժամանակ ավելի մատչելի և ընկալելի են դառնում թիրախ լեզվի ընթերցողի համար:

Միևնույն խնդիրն է առաջանում, երբ կարդում ենք հետևյալ օրինակը, որտեղ հետևյալ առածը՝ *Dios que da la llaga, da la medicina- Աստված տալիս է վերքը, ճարն էլ հեղուկ է տալիս*, երկու թարգմանություններում էլ բառացի է՝ *Աստված վերք է առաքում, ինքն էլ բուժում է*:

Հետևյալ առածում նույնպես՝ *El hombre pone y Dios despone* (II, LV, 1082)- *Մարդը ենթադրում է, Աստված՝ տնօրինում* միջնորդավորված և բնագրից կատարված ուղղակի թարգմանություններում հաղորդվել է բառացի:

Ամեն ժողովուրդ ունի աշխարհընկալման առանձնահատուկ դրսևորում և ակնհայտ է, որ շատ խոսքային միավորներ կարող են չունենալ համարժեքներ մեկ այլ լեզվում, սակայն թե՛ հայ, թե՛ իսպանացի ժողովուրդները իրենց հավատի դրսևորումներում մեծամասամբ նույնն են: Հավատացյալ հայ մարդկանցից յուրաքանչյուրը կարծում է, որ, անշուշտ, *Ամեն ինչ Աստծո ձեռքերում է*, և մեզ շատ հայտնի են *ինչպես Աստված կամենա, Աստծո կամքով, Աստված առաջ* արտահայտությունները: Կարծում ենք՝ այս արտահայտություններից ցանկացած թարգմանությունը կարող էր դարձնել ավելի գեղարվեստական և էլ ավելի բնագրին հավատարիմ: Ընթերցողը, այդ դեպքում այն կընկալեր ոչ թե բառացիորեն, այլ իր լեզվամտածողությանը ավելի հարազատ:

Թե՛ իսպաներեն և թե՛ հայերեն առածներում, միևնույն կերպ է ներկայանում նաև *քահանայի* դերը երկու ժողովուրդների մոտ: Քահանաները առածներում և ասացվածքներում հաճախ ի հայտ են գալիս բացասական բնութագրով: Այսպես՝ «Դոն Կիխոտում» հանդիպում ենք՝ *El abad de lo que canta yanta*, (II, LX, 1127) (բառացի՝ *քահանան ինչ երգում է, այն էլ ուտում է*): Առածը թարգմանվել է հետևյալ ձևով՝ *քահանան միայն պատարագով է ապրում*:

Հայերեն առածանիում քահանայի կերպարը բացասական ներկայացնող առածների և ասացվածքների առատությունը զարմանք է առաջացնում. *Քահանան ու սարանեն մեկ է, Ճամլիի վրա հո տերտերը, հո սարա-*

նեն, Վարդե մտավ քահանան, խեղը մտավ սատանան, Հախը թո տերտերին հասնի, ուզումա մեռելը գորբեգոր ըլի, Սար ու ձոր տերտերի փոր, Երասան քահանա, տակնահան սատանա, Սատանին կը հավատան տերտերին չեն հավատա, Ամեն մի սև մորուքի չեն հավատա և այլն:

Իսպաներենում ևս քահանայի կերպարը մեծամասամբ բացասական է՝ El abad, donde canta yanta, El abad, donde canta, ende yanta, El abad, de do canta, de allí yanta, El abad, de do canta, de ay yanta, El abad, de donde canta, de allí viste, El abad, donde canta, donde yanta, El abad canta donde yanta, Quien sirve al altar, ha de tener su yantar:

Իսկ **Քահանան միայն պատարագով է ապրում** ասացվածքին համարժեք հայերենում ունենք **որպեղ կարագ, այնպեղ պատարագ** ասացվածքը: Այս դեպքում ևս, թեև չի պահպանվում **քահանա** բառը, որը տվյալ ասացվածքում հանդես է գալիս որպես ցուցիչ, **պատարագը**, որպես երկրորդ ցուցիչ կարողանում է փոխանցել թե՛ ասացվածքի խրատական իմաստը և թե՛ պատկերավորման համակարգի յուրահատկությունը: Միևնույն ասացվածքը երկրորդ դեպքում երկու թարգմանիչները **քահանան** փոխարինել են **տերտերով՝ Տերտերը պատարագով է ապրում:**

Աստծո ուժի, արդարամտության, ամենակարողության դրսևորումների կողքին քիչ չեն նաև **սատանա** բաղադրիչով առածները, որոնք, այս դեպքում խորհրդանշում են նենգություն, չարություն, ճարպկություն և չարիք: Այսպես օրինակ «Դոն Կիխոտում» երեք անգամ հանդիպում ենք **Detrás de la cruz está el diablo**, (բառացի՝ **խաչի հետևում է սատանան**) ասացվածքը:

Թե՛ միջնորդավորված, թե՛ բնագրից կատարված թարգմանություններում՝ **խաչի հետևում սատանան է:** (ՎՍԲԹ, VII, I, 62), **խաչի ետևը նստած է սատանան:** (ԱՂՄԹ, VII, I, 51), **խաչի ետևը սատանան է կանգնած:** (ՎՍԲԹ, XXXIII, II, 240), **խաչի վերևը սատանաներ են լինում:** (ԱՂՄԹ, XXXIII, II, 256), առաձը յուրաքանչյուր դեպքում թարգմանվել է տարբեր կերպ: Այսպես ՎՍԲԹ-ում թարգմանիչը երեք դեպքում էլ կիրառել է **խաչի ետևում** պատկերը, մինչդեռ ԱՂՄԹ-ում՝ երկրորդ օրինակում, կարդում են **խաչի վերևը:** Առաձը մեկնաբանվում է հետևյալ կերպ, որ նրանք, ովքեր իրենցից վտանգ են ներկայացնում, հաճախ ներկայանում են որպես անմեղ, դրական կերպարներ: Եթե **խաչի հետևում** պատկերավորման դեպքում կարելի է փոխանցել **թաքնվելու** կամ **թաքցնելու** իմաստը, ապա մյուս տարբերակում այն որոշակիորեն աղա-

վաղվում է: Առաժի երկրորդ մասի թարգմանության դեպքում ՎՄԲ-ում կարդում ենք՝ *սատանան է, սատանան է կանգնած* և *սատանան է թաքնված*: Իսկ ԱՂՄԹ-ում *սատանան է նստած, սատանան է լինում* և *սատանաներ են թաքնված*: Այս դեպքում հարց է առաջանում, եթե թարգմանիչները նախապատվությունը տվել են առաժի դիպվածային պատճենման տարբերակին, արդյոք նպատակային էր առաժի երկրորդ մասում սատանային պատկերել *նստած* կամ *կանգնած*:

Իսպաներենում *սատանա* բաղադրիչով առաժների և ասացվածքների առատությունը ևս, կարծում ենք, որոշակի չափով պայմանավորված է նրանց կրոնի, հավատի դրսևորումներով: Ժողովուրդը իր արժեհամակարգում հստակորեն ի ցույց է դնում սատանայի բացասական կերպարը: Բացի չարություն և նենգություն խորհրդանշելուց, այն ճարպկության և հնարամտության խորհրդանիշ է: Առաժներից մեկը՝ *Un diablo parece al otro*, (բառացի՝ *Մի սատանան նման է մյուսին*), նշանակում է՝ *վար մարդկանց ընդհանրությունը չարությունն է, ճարպկությունը և նենգությունը*:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հայերենում *սատանա* բաղադրիչով առաժները մեծամասամբ կիրառվում են բնութագրելու ճարպկություն և խաբեբայություն: Օրինակ՝ *Սատանեն գեղնի տակ սխտոր ուտի, կիմանա: Սատանեն գեղնի տակը կերակուր եփելիս, աղ գցողը ես եմ: Սատանի հետի կրունկն է: Սատանայից օխտն օր առաջ է ծնվել*:

Այնպես, ինչպես *Un diablo parece al otro* (I, XXXI, 359) (բառացի՝ *մի սատանան նման է մյուսին*) բառացի թարգմանությունը ընկալելի է՝ պայմանավորված պատկերավոր համակարգի դրսևորմամբ՝ Չարմանալու բան էլ չկա՝ *մեկ սատանան նման է մյուսին*, նմանապես սնահավատության դրսևորում պատկերող՝ *Un mal llama al otro* (I, XXVIII, 331), (բառացի՝ *Մի դժբախտություն կանչում է մյուսին*), առաժը «Դոն Կիխոտ»-ի միջնորդավորված թարգմանության դեպքում բառացի է, մինչդեռ բնագրից թարգմանության ժամանակ՝ փոխարինվել առաժային համաբանությամբ՝ մի դեպքում՝ *մեկ դժբախտությունը կանչում է մյուսին*, մյուս դեպքում՝ *դժբախտությունը երբեք մենակ չի գալիս* (ԱՂՄԹ, I, XXVIII, 255) (I, XXVIII, 250):

Քանի որ բազմիցս նշել ենք, որ առաժների և ասացվածքների մեծ մասը ունեն իրենց իմաստին հակասող՝ հականիշ առաժներ, և, երբեմն էլ հեղինակը հենց ինքն է առաժը ձևափոխելով նրան նոր իմաստ և շունչ հաղորդում, «Դոն Կիխոտ»-ի մեկ այլ գլխում՝ կրկին ում կարդում ենք՝

bien vengas mal si vienes solo, (II, LV, 1079) (բառացի՝ **բարով գաս չարիք, եթե մենակ ես գալիս**) առածը: Այս անգամ տեսնում ենք հակառակ պատկերը՝ միջնորդավորված թարգմանության մեջ այն չի ընկալվում որպես առած՝ **Դեռ լավ է, երբ գլխիս եկածը մի դժբախտություն է**: (ԱՂՄԹ, II, LV, 410), իսկ բնագրից թարգմանությունը բառացի է՝ **Բարով գաս փորձանք, եթե մենակ ես գալիս**: (ՎՍԲԹ, II, LV, 386)

Ի տարբերություն նախորդ առածի, հայերենում ունենք՝ **Փորձանքը մի անգամ է պատրահում** տարբերակը, որը եթե ոչ միջնորդավորված թարգմանություն կատարողը, ապա բնագրից թարգմանություն կատարելու դեպքում թարգմանիչը պարտավոր էր փոխարինել այլ համարժեք տարբերակով: Յուրաքանչյուր ժողովրդի աշխարհընկալում առանձնահատուկ է և յուրատեսակ: Սակայն հետաքրքիր է, որ **կարկուտը ծեծած փեղն է ծեծում** առածին զուգահեռ հայերենում ունենք՝ **Աստված մի դուռը որ փակումա մյուսնա բացում** առածը, իսպաներենում՝ **Donde una puerta se cierra, otra se abre**, (I, XXI, 223) (բառացի՝ **Որտեղ մի դուռ փակվում է մյուսն է բացվում**): Առածի թարգմանությունները՝ **մի դուռ փակվեց, մյուսը բացվեց**: (ԱՂՄԹ, I, XXI, 165), «**Աստված մի դուռը փակում է, մյուսը բացում**»: (ՎՍԲԹ, I, XXI, 166)

Եթե կան բաղադրիչներ որոնք առանձին հստակորեն հավատի կամ սնահավատության տարրեր են, ապա **մեղք** բաղադրիչը միաժամանակ բնութագրում է երկու դրսևորումները: «Դոն Կիխոտ»-ում կարդում ենք՝ **A pecado nuevo, penitencia nueva**, ասացվածքը՝ (բառացի՝ **նոր մեղքի համար նոր քավություն**), իսկ թարգմանություններում կարդում ենք՝ «**նոր մեղքի համար-նոր զղջում**» (ԱՂՄԹ, XXX, I, 274), **նոր մեղքին՝ նոր պատիժ** (ՎՍԲԹ XXX, I, 268):

Ինչպես տեսնում ենք, բնագրից կատարված թարգմանության դեպքում թարգմանիչը նախընտրել է **պատիժ** բառը, որը, սակայն, հակասում է ասացվածքի իմաստին: Ասացվածքն ամփոփում է այն խրատը, որ մարդ պետք է ապաշխարի իր գործած յուրաքանչյուր մեղքի համար, մինչդեռ «**պատիժ**» բառը մթազնում է տեքստի և ասացվածքի իմաստը: Իսկ հետևյալ օրինակում հեղինակը ինքն է կիրառել այն առածը, որը ամփոփում է պատժի գաղափարը: Այսպես՝ *De los desagradecidos está el*

*infierno lleno*¹(II, LVIII, 1103) (բառացի՝ *անշնորհակալներով է լցված դժոխքը*) առածում արդեն ակնհայտորեն ընկալվում է պատասխան տալու, պատժվելու գաղափարը: Թարգմանիչները թեև կատարել են սովորական պատճենում, այնուամենայնիվ, դրանից չի տուժել պատկերային համակարգը, իսկ իմաստային տեսանկյունից այն մնացել է անխախտ: Այսպես՝ «*դժոխքը անշնորհակալներով է լեփ-լեցուն*»-առածին (ԱՂՄԹ, II, LVIII, 431), «*Դժոխքը երախտամոռներով է լեցուն*» (ՎՍԲԹ, II, LVIII, 406):

Մեկ այլ ասացվածքում՝ լատիներենով հայտնի *In inferno nulla est redemptio*, բառացի՝ *դժոխքից փրկություն չկա*, որտեղ գլխավոր բաղադրիչը ևս *դժոխքն* է, հեղինակը կիրառում է բառախաղ՝ ասացվածքի մի մասը Սանչոն ասում է իսպաներեն, մյուս մասը՝ լատիներեն, որտեղ *redemptio* «*փրկություն*» բառի փոխարեն ասում է *retentio*- *կալանավորում*: «-*Quien ha inferno- respondió Sancho- nulla est retencio*»², *segun he oido decir* (I, XXV, 281).

Նման հնարով հեղինակը հմտորեն ընդգծում է Սանչոյի կերպարը: Թարգմանիչները ևս ասացվածքի երկրորդ մասը փոխանցել են լատիներենով՝ պահպանելու բնագրային համարժեքությունը: Սակայն միջնորդավորված թարգմանության դեպքում կարդում ենք՝ *retentio-պահում* հենց լատիներեն տարբերակը, բնագրից թարգմանության դեպքում՝ *retencio*, որն այս դեպքում թարգմանիչը փորձել է համեմատել իսպաներենում միևնույն բառի հետ՝ *retención*, որն էլ իր հերթին լատիներենից փոխառված բառն է: Այսպես՝ *թե դժոխք ընկածի համար-nulla est retentio* (ԱՂՄԹ, I, XXV, 215), *թե դժոխք ընկածի համար-nulla est retencio* (ՎՍԲԹ, I, XXV, 211):

Մեկ այլ օրինակում՝ (II, LVIII, 1097) հեղինակը կիրառում է *Dios lo oiga y el pecado sea sordo* ասացվածքը, (բառացի՝ *Աստված լսի, իսկ մեղքը խույլ*), ձևափոխելով այն իսպաներենում հայտնի՝ *Dios lo oiga y el*

¹ Այս ասացվածքը ևս ունի աստվածաշնչյան սկզբնավորում, քանի որ համաձայն մեղքերի առաջին տեղը զբաղեցնում է ամբարտապանությունը՝ լատիներենով հայտնի՝ «*Initium omnis peccati est superbia*» տարբերակով:

² Մեր կարարած ուսումնասիրությունների համար բերված օրինակների գրքում կիրառված է *retencio* տարբերակը, մինչդեռ գրքի էլեկտրոնային տարբերակներում կարդում ենք՝ *retentio*, տե՛ս, <https://cvc.cervantes.es>:

diablo se haga sordo, (բառացի՝ *Աստված լսի, իսկ սատանի ականջը խույ*) տարբերակից: Այս անգամ արդեն միջնորդավորված թարգմանության մեջ կարդում ենք՝ **«Աստված բերանիցդ լսի և սատանաների ականջից հեռու»**, - *ասաց Սանչոն* (ԱՂՄԹ, II, LVIII, 426): Իսկ բնագրից կատարված թարգմանության դեպքում՝ **«Աստված ձեր ձայնը լսի, սատանի ականջն էլ խույ»**, - *ասաց Սանչոն* (ՎՍԲԹ, II, LVIII, 401):

Այս օրինակում թեև հեղինակը փոխարինել էր *սատանա* բառը *մեղք* բառով, թարգմանիչները նախապատվություն են տվել ասացվածքի դասական տարբերակին, որն ապահովել է հարազատություն թարգմանող լեզվում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով նշված առաձների և ասացվածքների կիրառությունը «Դոն Կիխոտ»-ում, որոնք ի ցույց են դնում իսպաներեն բնագրում հավատի և սնահավատության դրսևորումները, կարևորում ենք այն փաստը, որ դրանք Սերվանտեսի աշխարհայացքի և լեզվամտածողության մի մասն են կազմում: Այն հանգամանքը, որ հենց իսպաներենում այդ առաձները և ասացվածքները ունեն միևնույն իմաստը հաղորդող իրենց հոմանիշ տարբերակները, ապացույցն են այն բանի, որ Սերվանտեսը ամենևին էլ պատահական չի ընտրել հենց այդ բաղադրիչներով առաձներն ու ասացվածքները: Վերը նշված օրինակներում, ինչպես նկատեցինք, դրանց թարգմանությունը թե՛ միջնորդավորված և թե՛ բնագրից կատարված տարբերակներում մեծ մասամբ դիպվածային կամ սովորական պատճենումներ են: Վերը նշված առաձների մեծ մասը, ինչպես տեսանք, ունեն իրենց համարժեքները մեր լեզվում, և թարգմանիչների գերխնդիրը պետք է դառնար փոխարինել դրանք իրենց իսկ առաձային կամ ասացվածքային համարժեքներով, և հնարավորության դեպքում՝ զուգահեռ համարժեքով մեր լեզվում:

Սերվանտեսը «Դոն Կիխոտում» օգտագործել է ավելի քան հարյուր առաձ և ասացվածք, թևավոր խոսք, դարձվածային միավոր: Դրանց մեջ որոշակիորեն առանձնանում են հավատի և սնահավատության տարրեր պարունակող առաձներն ու ասացվածքները: Այդ բնույթի առաձ-ասացվածքներից կարող ենք կարծիք կազմել տվյալ ժողովրդի կրոնի, եկեղեցական տոների, ծիսակատարությունների, ընդհանրապես կրոնական մշակույթի վերաբերյալ: Հիմնականում նման առաձ-ասացվածքներում որպես բաղադրիչ գործածված են **Աստված, սատանա, քահանա, մեղք, քավություն, դև, արեղա, վանահայր, սուրբ** և նման բառերը:

Դրանց թարգմանությունը թե՛ միջնորդավորված և թե՛ բնագրից կատարված տարբերակներում մեծ մասամբ դիպվածային կամ սովորական պատճենումներ են: Վերը նշված առաձների մեծ մասը ունեն իրենց համարժեքները մեր լեզվում, և թարգմանիչների գերխնդիրը պետք է դառնար փոխարինել դրանք իրենց իսկ առաձային կամ ասացվածքային համարժեքներով, և հնարավորության դեպքում՝ զուգահեռ համարժեքով մեր լեզվում, ինչը որոշ դեպքերում նրանց հաջողվել է, որոշ դեպքերում՝ ոչ:

***Քանալի բաներ՝** «Դոն Կիխոտ», հավատ և սնահավատություն, աստված, ստրանա, քահանա, մեղք, իսպաներեն-հայերեն առած-ասացվածքներ, թարգմանվող համարժեք, բնագրային թարգմանություն, միջնորդավորված թարգմանություն, պատճենում, պարկերային համակարգ, ասացվածքային կամ առաձային համարանություն*

ПЕРЕВОД ПОСЛОВИЦ И ПОГОВОРОК О ВЕРЕ И СУЕВЕРИИ В «ДОН КИХОТЕ «СЕРВАНТЕСА

Ася Хачатрян

***Ключевые слова:** Дон Кихот, вера и суеверие, бог, дьявол, священник, грех, испанско-армянские пословицы, поговорки, эквивалентный перевод, оригинальный перевод, опосредованный перевод, копирование, картинная, иллюстрированная, образная система, аналогия пословиц и поговорок.*

В «Дон Кихоте» Сервантес использовал более сотни пословиц, поговорок, разговорных фраз. Среди них выделяются пословицы и поговорки, содержащие элементы веры и суеверий. Из высказываний такого рода пословиц можно составить мнение о религии народа, церковных праздниках, обрядах, о религиозной культуре в целом. Такие слова, как Бог, дьявол, священник, грех, искупление, монах, аббат, святой, в основном являются составной частью таких пословиц.

Их переводы, как опосредованные, так и оригинальные, в основном представляют собой случайные или обычные копии. У большинства вышеперечисленных пословиц есть свои эквиваленты в нашем языке, основной задачей переводчиков должна была быть замена их собственными пословицами или эквивалентами пословиц, при возможности параллельным эквивалентом на нашем языке, что в некоторых случаях им удалось, а в некоторых - нет.

**TRANSLATION OF SAYINGS AND PROVERBS OF DISBELIEF AND
SUPERSTITION IN CERVANTES'S «DON QUIXOTE»**

Asya Khachatryan

Key words: *«Don Quixote», faith and superstition, God, devil, priest, sin, Spanish-Armenian sayings and proverbs, equivalence in translation, original translation, mediated translation, calque, image system, correspondence of sayings or proverbs*

In «Don Quixote» Cervantes used more than a hundred of sayings and proverbs, idioms and phraseological units, among which those possessing elements of faith and superstition stand out. These proverbs can form an opinion about the religion, church holidays, rituals and the religious culture of the people in general. The words that are the main constituent part of such sayings and proverbs are God, devil, priest, sin, atonement, demon, monk, abbot and saint.

The translation of these sayings and proverbs from both mediated and original texts are mostly random or are merely calques. Most of the mentioned proverbs have their equivalents in our language and the main target of the translators should have been to find and replace them with their equivalents and, if possible, with a parallel equivalent. So far some endeavours of the translators have been successful, others not.